

ԱՆՑ ՓԱՅԼԱԽՈՒԻ ԶԵՐԵՍՈԲ ԱՐԵՒԻՈՒ

* * *

Սերկայ ամսոյս նոյ. 29 /հոկ. 10
արևու մտնելէ ժամ մի զինի, ըստ
Հասարակաց ժամացուցի ի 16⁴ 45⁴
4⁵ փայլածուի և արևու շրջապատք
դիրար պիտի սկսին շօշափել, և ի
22⁴ 24 33⁴ իրարմէ պիտի անջատին.
այս ըստ բացատրութեան օրացուցի՝
է անցք փայլածուի՝ զերեսօք արեւու,
որոց տեսողութիւնն պիտի լինի 5⁴
174 և 29⁵. այս անգամու անցքն տեղի
կ'ունենայ արեւուն հիւսիսային կիսա-
գընախն վրայ՝ հեռի սկաւառակի կե-
դրոնէ 0, 37, վերջնոյս շառաւիզը
միութիւն առնելով։ Այս անցս ոչ ի
կ. պոլիս և ոչ ի վանս Ս. Ղազարու-
որ ի վենետիկ պիտի տեսնուի, այլ
տեսանելի պիտի լինի իտալիոյ հիւսի-
սային արևմտեան մասէն, վերջինէն՝
միայն շօշափման սկիզբն՝ և այն արեւու
մտնելու ժամանակ, և երթարով պիտի
սկսի աւելի երկար երևիլ բոլոր եւ-
րոպից և Աֆրիկյ արևմտեան կող-
մերէն, Ատլանտեան ովկիանուէն, Ա-
մերիկայէն, Խաղաղական ովկիանուէն,
արևելեան Աստրալիայէն, և վերջապէս
միջին Աւստրալիա պիտի տեսնէ միայն
անջատում՝ արեւու ժաման ժամա-
նակ։ Սակայն այսպիսի անցքը հազիւ-
երքեք կ'ունենանք. զորս հաշուելով ա-
րուսեկի և լուսնի անցից հետ, ըստ
դիտողութեան Պ. Սպոլզերի՝ 1600—
2100, այն է հինգ դար միջոցի մէջ
հազար եօթն հարիւր իննուուն և վեց
խաւարմունք արեգական պիտի կա-
տարուին՝ աեսանելի յերկրէս, որոց
հազար երեք հարիւր քսան և ինն լը-
րացան, և կը մնան կատարուելիք գեռ
չորս հարիւր վալժսուննեօթն։ Այս
հինգ դարուց անցից միջէն՝ վաթ-
ուունն փայլածուին պիտի լինին, քա-

ռասուն վեցն ելք 'ի նոյեմբերի, և
տասնուշորսն էջք ի մայիսի. յորմէ կը
տեսնուի՝ թէ ելք եռապատիկ աւելի
են քան էջք, թէ պէտ և այդ համե-
մատութիւնն չենք կրնար իբր հաս-
տատուն օրէնք նկատել, զի մինչդեռ
այս դարու շրջանաց գրից համեմատ
այսպէս կը պատահի, կրնայ և ընդ-
հակառակն պատահել ժամանակի գը-
րոց փոփոխութեամբ։ Որոշեալ (1600)
թուականէն ցարդ երեսուն և հինգ
անգամ անցքեր է փայլածուն արեւուն
երեսէն, որոց քսաննեինն անցելոյն մէջ
դիտուած կը յիշատակուին, և քսան
և հինգն պիտի կատարուին մնացեալ
երկուհարիւր վեց տարւոյ շրջանի մէջ։
Սակաւ անցնելուն պատճառն՝ որպէս
յայտնի է՝ իւր պարունակին ծռու-
թիւնն է որով եօթն աստիճան հակեալ
է խաւարման ծրի վրայ։

Փայլածուի անցից նման շատ հե-
տաքրքրական են նաև արուսեկի ան-
ցերն։ Սա վերոյիշեալ հինգ դարուց
շրջանի մէջ՝ հազիւ. ութ անգամ պիտի
անցնի արեւու առջնէն, որոց հինգն
կատարուեր է. իսկ երկու հարիւր վեց
տարւոյ մէջ ըստ մեզ երեք անգամ
և պիտի անցնի՝ 1988Էն, 1996Էն և
2014Էն։ Սակայն ֆոնվիլոս ընդհակա-
ռակն երկու ապագայ անցքեր միայն
կը դնէ 2004Էն և 2012Էն, այլ թէ
ինչ հիմնամբ, ոչ դիտեմ։ Այս յայտնի
է՝ թէ արուսեկի իւրաքանչիւր անցից
մէջ, շրջան մի կայ հաստատուն, նախ
հարիւր հինգ ու կէս տարւոյ, և յետ
այնք՝ ութ տարւոյ նոյնք կը կրկնուին
միշտ, ինչպէս ցարդ կատարուած հինգ
անցերէն կ'իմնանամբ։ 1647^{1/2} + 8 =
1655^{1/2} + 105^{1/2} = 1764 + 8 = 1769
+ 105^{1/2} = 1874^{1/2} + 8 = 1882 և նոյն

բնական շրջանը յառաջ վարելով + 105½ = 1988 + 8 = 1996 + 105½ = 2101, կ'ունենանք երեք անգը: Այդ պահ հաջող նայելով, արուսեկի և փայլածուի միանգամայն հինգ դարաշրջանի մէջ վաթունեւութ կը հաշուին: Թեացեալ հազար եօթն հարիւր քանան և ութ անցերն լունի են որ ըստ սովորական բացատրութեան խաւարումն արեգական կը կոչեմք. (աւելորդ է

ըսկ՝ թէ լուսին երկրիս մօտ լինելով անցնելու ժամանակ կը ծածկէ զարեգակն. ուր փայլածուն և արուսեակ, թէպէտ քան զլուսին մեծազանդուած, սակայն մին քան զայն երկու հարիւր քառասուն անգամ՝ և երկրորդն հարիւր ինն անգամ աւելի հեռի լինելուն համար՝ անբաւական են ծածկել արևուն լցոն):

ԳԻՏԱԿԱՆՔ

Մետաղը բուսոյ մէջ: Յաճախ զարմանք ազդեր է գիտնոց բուսոց մէջ մետաղական հետքեր գտնելն: Եւ արդէն իսկ ծանօթ է որ իսաղողյ, ծխախոտոյ և որթոյ տերևոց մէջ կայ լիտին (litina). Դարձեալ, կալաքարային մետաղ մի ես, որ լիտինի ամենայն տեսակ մետաղաց մէջ իտոն կը գտնուի, փոքր քանակութեամբ կայ ծխախոտոյ զանազան տեսակաց մոխրոյն մէջ, 'ի սուրճ, 'ի թէյ, և առաստապէս 'ի ճակնդեղի, որոյ մոխրին առատ կը մատակարարէ վերցյիեալ կալաքարային մետաղէն քլորուկի վիճակի մէջ:

Թէպէտև տարակուսական է, թէ արդեօք բուսական մոխրոց մէջ կը գտնուի՝ պաղլեղիկ, բայց երկաթայիին թթուուկի և մատնանի գտնուիլն ամենասույգ է երբեմն երբեմն. — Եւ երբ փայտ, տերեւ կամ՝ պտուղ այրենք՝ մոխրոց մէջ կարմիր գոյն մի կը տեսնուի, որ երկաթայիին թթուուկէ յառաջ կու գոյ, դարձեալ կանաչային գոյն մ'ալ, կալի մագնային պատճառաւ:

Զինք մի քանի բուսոց մոխրոց մէջ կայ, մասնաւորապէս արուրաքարային մանուշակին, որ յաճախ խաւի մի մէջ

գտնուած վերցյիշեալ մետաղը գտնելու կը ծառայէ:

Քլոր, յովկ և բրոմ մետաղակերպ մարմինք կալաքարային մետաղաց հետ խառն կը գտնուին, մասնաւորաքար ծովային բուսոց մէջ: Իսկ այժմ՝ յովկ՝ որ 'ի բժշկութեան և յարուեստո կը գործածուի, ծովային բուսերէ կը հանուի, թէպէտ նոուազ քանակաւ:

Մէյէր 'ի կոպենհակէ առաջին անգամ հաստատեց, թէ ցորենոյ հատիկներն և վարսակ կը բովանդակեն պղինձ, որ և անոնց բաղադրութեան հաստատուն՝ տարբին է: Պղինձն իրաքայս արմտեաց մէջ կայ, բայց առաւելապէս անոնց թեփոյն մէջ է. և որովհետեւ հացին մէջ միշտ թեփ կը գտնուի, ուստի հացին հետ պղինձն ևս կ'ուտենք: Եւ դիտելու է՝ որ պըղինձն մեծ գործ կը կատարէ հացի մէջ, այսինքն պղինձի ծծմբուտին՝ 1/30,000 մասն կը բաւէ ալիւրը աւրելու և խանացընելու:

Զենք գիտեր, թէ երբ սկսեր են հացագործք պղինձի կամ զինկի թթուուտ գործածել, որոց երկոցունց մի և նոյն է արգասիքն, այսինքն վըտանգաւոր:

Եւ լաւ, ընտիր ալիւր ունենալու